Վանաձոր համայնքի ղեկավարի

ժամանակավոր պաշտոնակատար

պրն. Արկադի Փելեշյանին

«Քաղաքացու Ձայնը» մեդիահարթակի լրագրող

Լուսինե Սարգսյանից

Հարգելի պրն. Փելեշյան,

ԳՄՀԸ-ի «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում 2024-ին Վանաձոր համայնքում կառուցվել են սմարթ կանգառներ: Տեղեկություն ունեմ, որ կառուցված կանգառները կառուցվել են նախագծից բավական շեղումներով և արտաքնապես չեն համապատասխանում նախնական նախագծային տեսքին: Բացի այն, որ ի սկզբանե նախատեսված վայրերում չեն կառուցվել, չունեն նաև չունեն համապատասխան կահավորանք, ինչը նախատեսված է եղել նախագծով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի վերաբերյալ:

1. Քանի՞ կանգառ է նախատեսված եղել կառուցել նախագծով և քանի՞սն են կառուցվել

2. Արդյո՞ք կանգառները կառուցվել են նախագծին համապատասխան, թե՞ նախագծից շեղում կա,

3.Արդյո՞ք կանգառները կառուցվել են նախագծով նախատեսված վայրերում, թե՞ բոլորովին այլ վայրերում

4.Որքա՞ն գումար է ներդրվել ԳՄՀԸ -ի կողմից նախագծի իրականացմանը և որքա՞ն համայնքը

5. Ո՞ր կազմակերպությունն է իրականացրել կանգառների նախագծման աշխատանքները

6. Ինչպե՞ս է ընտրվել տվյալ կազմակերպությունը /մրցույթ, մեկ անձից գնման ընթացակարգ/

7. Խնդրում եմ տրամադրել սմարթ կանգառների ծրագրի նախագծային ամբողջական փաթեթը

8. Ընդունվե՞լ է արդյոք կատարված աշխատանքը համայնքապետարանի կողմից, եթե այո, խնդրում եմ պարզաբանել՝ ինչպե՞ս և ի՞նչ հիմնավորմամբ է ընդունվել նախագծային շեղումներով իրականացված աշխատանքը,

9. Որքանո՞վ է արդարացված Գերմանիայի կառավարության տրամադրած գումարների ոչ նպատակային ծախսը ապօրինի կառուցված կանգառների վրա, եթե նկատի առնենք, որ նախագծով հաստատված են եղել այլ վայրեր, բայց կանգառներից մի քանիսը կառուցվել են բոլորովին այլ տեղերում և չունեն այն կահավորումը, ինչի մասին հայտարարել էր համայնքապետարանը:

10.Ի՞նչն է պատճառը, որ կանգառները կառուցվել նախագծային ակնհայտ շեղումներով՝ արդյունքում զրկելով Վանաձոր համայնքի բնակիչներին ժամանակակից կահավորանքով իրապես սմարթ կանգառներ ունենալու հնարավորությունից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Միաժամանակ, թեմայի շուրջ խնդրում եմ մեկնաբանություն համապատասխան պաշտոնյայից՝ հարցազրույցի տեսքով՝ հոդվածում ներառելու համար:

Կանխավ շնորհակալ եմ՝

Հարգանքով՝ Լուսինե Սարգսյան

01/16/25 թվական